ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 45-Ա

«17» մարտի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի , 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի, 47-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, « Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքային օպերատիվ շտաբի գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով՝

Որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի Ամասիա համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության «Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձանագրմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքային օպերատիվ շտաբ ստեղծելու մասին» թիվ 44-Ա որոշմամբ

ստեղծված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքային օպերատիվ շտաբի (այսուհետ՝ Օպերատիվ շտաբ) աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Օպերատիվ շտաբի անդամների իրազեկման հաջորդ օրվանից և դադարում է գործել՝ Օպերատիվ շտաբի գործունեության դադարեցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ
ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«17» մարտի 2020 թվական
գյուղ Ամասիա